

ցէ առ եղիազարն թէ Անցեալն էանց եւ ընդ նորոյն սիրով լիջիք եւ միակամ, քանզի բաւ է այսքան աղճատանք եւ լեզուադարիւն մերում փոքր ազգի եւ ալլն. որ էր Փետրվարի Ե:

Իսկ ի մուտն ամսոյ առաջի շաբաթու աւագ պահոց բաշխւեր օլօֆէն ծառայից, որ յառաջ քան զաւուրս երկց փոխեցին զղազիէսքէրսն եւ զմեծ զատին եւ եզին զՄէլիքատէն: Եւ ի տեսանելն արքայի զմուրացիկս լրբենի զխմօք ի զուռն վէզիւրի՝ հրամայեաց տալ ի նաւս պատերազմին: Եւ սպան զՇահսուարօղլին բերեալ զգլուխ նորին ի Մարայ, զոր ինքն ետ եւ ետ Մուստաֆին, որ էր փեսայ Մուրատին: Ի գալն արքայի աստ՝ յաւուր միում կին սորա կառօք հանդիպի արքային ի ճանապարհս, եւ ասեն նմա յանկարծ եւ արգիլի ընդ յանկիւն մի ճանապարհին մինչեւ անցանէ արքայ, եւ երթեալ ի տուն յետ սաղաւ աւուրց մեռանէր:

Մարտի ամսոյ ԺԹ Ժ-րդ ժամուն յանկարծակի եղեւ շարժ յորդ միահետ եւ էանց: Եւ այգուցն Դշի (20 Մարտ), որ Միջինք պահոցս ասի եւ զարնանամուտ հաւաստի եւ ի հասարակ աւուր է-րդ ժամու ծածկեաց ամպ զերեսս երկնից եւ սկսաւ նուաղիլ լուսոյ արփոյն մինչ զի եւ խաւար կալաւ զամենայն երկիր օգուտ ժամուն քառեակ մասին միոյ մասի, եւ եղեւ տիւն իբրեւ ի մէջ գիշերի, որպէսզի և բազումք ի ծերոցն ոչ էին տեսեալ այսպիսի իր. եւ սկսան ի նոյն ժամու զօռալ ազգ մարդկան առ Տէր և լալ մեծաւ աղաղակաւ, եւ որք ի վաճառս եւ ի շուկայս՝ աճապարեցին¹⁾ ի տուն իւրեանց(*), իսկ որ մերձա-

1) յաճապարեցին.

(*) Լուս. եւ յանգուզն բնութիւն մարդկային սեռի թո-